

Սիրելի հայրենակիցներ,

Ամառուայ արծակուրդներէն ետք, վստած են կազդուրլած եւ նոր թափով վերադարձած էք ձեր աշխատանքներուն: Դպրոցները մէկ ամիսէ ի վեր իրենց դռները բացած են փոքրիկներուն եւ պատանիներուն դիմաց ու կեանքը կը շարունակուի բնականոն ձեւով, հակառակ երկրին մէջ տիրող եւ օր ըստ օրէ սաստկացող տնտեսական տագնապին:

Սակայն, կարելի չէ նոյնը ըսել Սուրիահայ մեր հայրենակիցներուն պարագային, որոնք դժուար ամառ մը անցուցին եւ կը դիմագրաւեն անորոշ ապագայ: Անգործութիւն կը տիրէ մասնաւորապէս Զալէպ քաղաքին մէջ, զըպրոցները իրենց դռները չեն կրցած բանալ, իսկ ճամբաները եւ բնակարանները անապահով են ռումբերու եւ հրթիռներու պատճառով: Դժբախտաբար, հայաշատ գաղութ մը եւս կ'ապրի տագնապալից պահեր եւ գոյատեւելու վտանգին դիմաց կը գտնուի: Բնակարաններուն եւ կամ Ազգային կառոյցներուն հասած վնասները բաւական են, որոնց կողքին կու գան աւելնալու մարդկային կեանքի կորուստներ: Յոյսով ենք, որ այս կացութիւնը մօտ ապագային կը բարելաւուի եւ Սուրիահայ գաղութը կը վերագտնէ իր նախկին բարօր վիճակը: Սփիւռքի գանազան գաղութներ եւ Զայաստանի Զանրապետութիւնը արդէն իսկ դիմած են անմիջական քայլերու, օգնութեան ձեռք երկարելով մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Գալով Կիպրահայ գաղութի կեանքին, Յուլիս ամսուայ մէջ, Կիպրոսի Նախագահութեան ստանձնման առիթով

կազմակերպեցինք Ցուցահանդես մը՝ մասնակցութեամբ Կիպրահայ Գեղանկարիչներու եւ Լուսանկարիչներու: Ցուցահանդէսը, որ տեղի ունեցաւ Քասթէլիոտիսսա սրահէն ներս, մեծ տպաւորութիւն ձգեց թէ՛ Կիպրահայ եւ թէ օտար հասարակութեան մօտ: Այս մասին յատուկ հաղորդագրութիւն պիտի գտնէք «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Սեպտեմբեր 13-ին, մեծ շուքով եւ յատուկ ընդունելութեամբ մը նշուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 21-րդ տարեդարձը: Այս ձեռնարկը իր հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ պատուեց ՀՀ Արտաքին Գործոց Նախարար Ն.Վ. Էդուարդ Նալպանտեանը: Ընդունելութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Խրիստոֆիասը: Մամբանանութիւններուն համար կը խնդրուի կարդալ «Լրատու»ի թիւ 7-րդ էջը:

Խօսքս աւարտելով, կը փափաքիմ բարի եւ յաջող կըրթական տարեշրջան մաղթել բոլոր հայ ուսանողներուն, ըլլան անոնք Կիպրոսի մէջ կամ Կիպրոսէ դուրս:

Վարդգէս Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հպատակություն

Օգոստոս ամսուայ մէջ, երկար տարիներ Նիկոսիա օրինաւոր բնակութիւն հաստատած հայրենակից մը, ստացաւ Կիպրական հպատակութիւն:

Կիպրահայ Գեղանկարիչներու եւ Լուսանկարիչներու Ցուցահանդէս



Կազմակերպութեամբ եւ նախաձեռնութեամբ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի, Երկուշաբթի, 16 Յուլիս 2012-ին երեկոյեան ժամը 7.30-ին, Նիկոսիոյ Միջնադարեան «Քասթէլիոտիսսա» սրահէն ներս տեղի ունեցաւ Եւրոմիութեան Կիպրական Նախագահութեան ստանձնումին նուիրուած՝ Կիպրահայ Գեղանկարիչներու եւ Լուսանկարիչներու Ցուցահանդէս:

Ցուցահանդեսին բացումը կատարեց Կիպրոսի Հանրապետության Նախագահ Ն.Վ. Տիար Տիմիթրիս Խրիստոֆիաս: Հայ Համայնքի ներկայացուցիչներէն ներկայ էին Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս, Տէր Մոնիկ Քահանայ, կուսակցապետներ, միութիւններու ատենապետներ, թերթերու խմբագիրներ, ինչպէս նաեւ մեծ թիւով պետական բարձրաստիճան պաշտօնակատարներ, դեսպաններ եւ այլ հրաւիրեալներ, որոնց թիւը միասնաբար կը հասնէր մօտ 300-ի:

Ցուցահանդեսին պաշտօնական բացումը կատարելէ ետք, Հանրապետութեան նախագահը իր ազնիւ տիկնոջ հետ եւ ընկերակցութեամբ Պրն. Մահտեսեանին ու անոր տիկնոջ, կանգ առաւ իւրաքանչիւր ցուցատախտակի դիմաց մօտէն ծանօթանալով արուեստագէտներուն ու անոնց գործերուն: Ապա, ան իր պատգամը յղելով ներկաներուն, վեր առաւ Կիպրահայ համայնքի ունեցած բազմամեայ ներդրումը Կիպրոսի մշակութային ու տնտեսական կեանքին մէջ, շնորհաւորելով Պետական Ներկայացուցիչը այս պատշաճ ու գեղեցիկ նախաձեռնութեան համար:

Կիպրոսի լրատուական միջոցները լայն ձեւով անդրադարձան այս միջոցառումին: Յիշենք, թէ ցուցահանդէսը հանրութեան դիմաց բաց մնաց մինչեւ 31 Յուլիս 2012:

Նարեկ Հայկական Վարժարաններու 2012

տարեշրջանի շրջանաւարտներուն այց՝ Հայաստան

Շաբաթ, 7 Յուլիս 2012-ին, երրորդ տարին ըլլալով Նարեկ Հայկական Վարժարաններու շրջանաւարտները ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու՝ Տիկին Մակի Հալաճեան-Էսկիճեանի եւ Պրն. Նազարէթ Գալֆայեանի, երկու շաբթուայ համար մեկնեցան Հայաստան: Ինչպէս արդէն տեղեակ էք, այս շրջապտոյտը Պրն. Մահտեսեանի խոստացած նուէրն է շրջանաւարտներուն, որ կ'իրականանայ



Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարարության «Արի Տուն» ծրագրի ծիրէն ներս:

Ինչպէս միշտ, այս տարուայ խումբն ալ մեծ խանդավառութեամբ եւ յիշատակելի տպաւորութիւններով վերադարձաւ Կիպրոս: Ըստ ընկերակցող ուսուցիչներուն, որոնք Հայաստանէն վերադարձին հանդիպեցան Պրն. Սահտեսեանին հետ իրենց երախտագիտութիւնը յայտնելու, փոխանցեցին թէ «Արի Տուն» ծրագրի յայտագիրը ճոխ եւ բժախնդրութեամբ պատրաստուած էր: Յիշենք, թէ այս տարուայ մասնակցողները, ընկերակցութեամբ հիւրընկալող ընտանիքի տարեկից բարեկամներուն, երկրորդ շաբաթը անցուցին Աղաւնաձորի ճամբարին մէջ:

Ռամիլ Սաֆարովի արտայանձնում

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Սահտեսեան, Երեքշաբթի, 4 Սեպտեմբեր 2012-ի առաւօտեան, հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան մօտ հաւատարմագրուած Հունգարիոյ Դես-

պան Ն.Վ. Պալաչ Պոթոսի հետ: Պետական Ներկայացուցիչը իր ու Կիպրահայ Գաղութի անունով բողոքագիր մը յանձնեց դեսպանին, խոր հիասթափութիւն յայտնելով եւ խստօրէն դատապարտելով Ռամիլ Սաֆարովի վաղաժամ արտայանձնումը: Ան այս արարքը որակեց խախտում ընդդէմ արդարութեան, մարդկային իրաւունքներու եւ արժանապատուութեան:

Նոյն օրը, ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանատան միջոցով Երեսփոխանական Գրասենեակ հասած ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութեան Մամլոյ Հաղորդագրութիւնը (Յունարէն եւ Անգլերէն լեզուներով) ուղարկուեցաւ Կիպրոսի հայատառ, յունատառ, անգլիատառ թերթերուն եւ հեռուստաընկերութիւններուն:

Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2012-ի կէսօրուան ժամը 12:00-ին, Նիկոսիոյ Հունգարական դեսպանատան առջեւ տեղի ունեցաւ բազմամարդ բողոքի ցոյց, կազմակերպութեամբ երեք ակնհայտ կուսակցութիւններուն եւ յարակից միութիւններուն: Կուսակցութիւններու ներկայացուցիչները բողոքի նամակ մը յանձնեցին Դեսպան Պոթոսին, որ անձամբ դիմաւորեց զանոնք: Ան ցաւ յայտնեց պատահածին համար եւ խոստացաւ բողոքի նամակը անմիջապէս փոխանցել իր կառավարութեան:

Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը նամակ մը յղեց Կիպրոսի Ներկայացուցիչներու Տան Նախագահ Պրն. Եաննակիս Օմիրուին, խնդրելով որ ան պաշտօնապէս դատապարտէ Ազրայէճանի անօրինական արարքը գործածելով իր ու Կիպրոսի Կառավարութեան հանգամանքը՝ որպէս Եւրոպական Միութեան անդամ երկիր, եւ Եւրոխորհուրդի եւ այլ կազմակերպութիւններու միջոցաւ ճնշում բանեցնէ Հունգարական կառավարութեան վրայ, որպէսզի Սաֆարով անմիջապէս ձերբակալուի ու գործուած սխալը սրբագրուի:

**Հայաստանի Հանրապետության
Անկախության 21-րդ տարեդարձի ընդունելություն**



Հինգշաբթի, 13 Սեպտեմբեր 2012-ին, երեկոյան ժամերուն, Նիկոսիոյ «Հիլթըն Փարք» պանդոկի բացօդեայ պարտէզին մէջ, տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետության Անկախության 21-րդ տարեդարձին առիթով պաշտօնական ընդունելութիւն, միացեալ կազմակերպութեամբ Հայաստանի Հանրապետության Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան եւ Երեսփոխանական Գրասենեակին: Ընդունելութիւնը կը վայելէր Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց Նախարար Էդուարդ Նալպանտեանի հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը:

Ողջոյնի խօսքերով ելոյթ ունեցան ՀՀ Արտաքին Գործոց Նախարար Ն.Վ. Էդուարդ Նալպանտեանն ու Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Խրիստոֆիասը: Կիպրոսի նախագահը, իր սրտագին բարեմաղութիւնները յղեց Հայաստանի նախագահին եւ փայլուն ապագայ մաղթեց Հայաստանի Հանրապետութեան անկա-



խութեան տարեդարձին ուրախ առիթով:

Այս ընդունելութեան, Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Տիմոթիոս Խրիստոֆիասի կողքին, ներկայ գրտնուեցան նաեւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Պրն. Եաննակիս Օմիրու, Կիպրոսի Արտաքին Գործերու Նախարար Տիկին Էրատո Կոզակու-Մարկուլլիս, մեծ թիւով պետական անձնաւորութիւններ, դեսպաններ եւ կիպրահայ համայնքի անդամներ, որոնց թիւը կը գերազանցէ երեք հարիւրը:

Երեկոյեան, Տէր եւ Տիկին Մահտեսեաններուն բնակարանը հիւրասիրուեցան ՀՀ Արտաքին Գործոց Նախարար Էդուարդ Նալպանտեանն ու Յունաստանի եւ Կիպրոսի Լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանը:



Ուրբաթ, 14 Սեպտեմբեր 2012-ի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ հանդիպում, ներկայութեամբ Հայաստանի Արտգործ Նախարարին, Կիպրոսի Դեսպանին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչին եւ գաղութային ներկայացնող կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն:

Հոս յիշենք, թէ 21 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան տարեդարձին առիթով, Պրն. Վարդգէս Սահտեսեան անհատական շնորհաւորագիրներ յղեց Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեանին, Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեանին եւ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանին:

Կիպրահայ գաղութի կեանքէն

Չորեքշաբթի, 19 Սեպտեմբեր 2012-ին, Պրն. Սահտեսեան ներկայ գտնուեցաւ Լիմասոլաքնակ հայրենակից Պրն. Արսէն Աղաճանեանի նախաձեռնած՝ Իքաթերինա Շիթովայի եւ Սիքայէլ Պօղոսեանի «If Only Everyone» Ֆիլմի ցուցադրութեան, որ տեղի ունեցաւ Լիմասոլի K-Cineplex շարժասրահէն ներս: Նիւթը առնչութիւն ունէր Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարին հետ եւ գործակցութեան արդիւնքն էր Հայաստանի Ազգային Ֆիլմաշարի կեդրոնին եւ Team Productions-ի միջեւ:

Կիրակի, 30 Սեպտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Լիմասոլի Ս. Գեորգ եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով մատուցուած Ս. Պատարագին:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ծեռնարկներ

Երկուշաբթի, 2 Յուլիս 2012-ին, Պետական Ներկայա-

ցուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ նորանշանակ Ներքին գործոց Նախարար Տիկին Էլէնի Մավրուիին հետ, երկրին դիմագրաւած դժուարութիւններուն, ինչպէս նաեւ Կիպրահայ գաղութը յուզող կարգ մը հարցերուն կապակցութեամբ:

Հինգշաբթի, 5 Յուլիս 2012-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Եւրոմիութեան Կիպրոսի Նախագահութեան դրօշին պաշտօնական ստանձնման միջոցառումին, որ տեղի ունեցաւ հնադարեանի «curium» ամփիթատրոնին մէջ:



Չորեքշաբթի, 25 Յուլիս 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Philoxenia Համագումարներու Կեդրոնին մէջ տեղի ունեցած, Եւրոպական օրուայ 4-րդ ճանապարհային անվտանգութեան առիթով, Փոխադրամիջոցի եւ Կապի Նախարարութեան կազմակերպած «Երիտասարդներու աշխոյժ մասնակցութիւնը ճանապարհային անվտանգութեան մէջ» նիւթով համագումարին:

Երեքշաբթի, 4 Սեպտեմբեր 2012-ին, Պրն. Մահտեսեան Մարոնիթ Համայնքի Ներկայացուցիչին հրաւերով, ներկայ գտնուեցաւ «Հիլթըն» Պանդոկին մէջ տեղի ունեցած ընթրիքին, ի պատիւ Եւրոպական 32 Երկիրներու Եկեղեցական Ներկայացուցիչներուն: Անոնք, Կիպրոս կը գտնուէին գումարելու յատուկ միստ մը նուիրուած ընկերային հարցերու, որ կազմակերպուած էր Եւրոպական Միութեան Կիպրոսի Նախագահութեան ստանձնման առիթով:

Երկուշաբթի, 10 Սեպտեմբեր 2012-ի կէսօրին, Պետա-

կան Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ աշխատանքային ճաշի մը, ներկայութեամբ Կիպրոսի Առեւտուրի, ճարտարարուեստի եւ Զբօսաշրջութեան նախարար Նէոկլիս Սիլիկիոտիսի եւ Լիբանանի Արդիւնաբերութեան հայազգի Նախարար Վրէժ Սապունճեանի: Նոյն օրը երեկոյեան, Պրն. Մահտեսեան իր բնակարանին մէջ հիւրընկալեց Նախարար Սապունճեանը եւ Կիպրոսի մէջ Լիբանանի Դեսպանութեան գործակատար Տիկին Նատա Ալ Աքըլը:



Երեքշաբթի, 18 Սեպտեմբեր 2012-ին, Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ Թեմական ժողովի Ատենապետ Պրն. Սեպուհ Դաւիթեանի, Թեմական ժողովի Փոխ-ատենապետ Պրն. Մանուկ Մկրտիչեանի եւ Վարչական ժողովի Ատենապետ Պրն. Ճոն Կէվիէրեանի, տեսակցութիւն մը ունեցան Կիպրոս հաւատարմագրուած Միացեալ Նահանգներու նորանշանակ Դեսպան Պրն. Ճոն Քոնիլի հետ: Պրն. Մահտեսեան, որ նախապէս իր շնորհաւորանքը գրաւոր յղած էր դեսպանին, անգամ մը եւս շնորհաւորեց եւ յաջողութիւն մաղթեց անոր իր նոր առաքելութեան մէջ: Ապա, պատուիրակուիւնը արծարծեց Վիքթորիա փողոցի վրայ գտնուող եւ վերջերս վերանորոգուած Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ յարակից կառոյցներուն՝ Կիպրոսի գրաւեալ շրջանին մէջ գործող համալսարանի մը կողմէ գործածութեան տրուելու մանրամասնութիւնները եւ Դեսպանին ուշադրութեան յանձնեց Կիպրահայ գաղութին ընդվզումը այս նոր եղելութեան լոյսին տակ:

Թարմացնելու համար «Լրատու»ի
 հասցեացանկը, Կիպրահայ գաղութի
 անդամներին եւ մեր հայրենակիցներին կը
 խնդրուի կապ հաստատել Երեսփոխանական
 Գրասենեակին հետ հեռաձայնելով 22454540
 թիւին, ճշդելու համար բնակարաններու
 հասցէները եւ կամ տեղեակ պահելու այլ
 փոփոխութիւններու մասին:

Շնորհակալութիւն

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան
 Օրէնքներուն» բաժինը լոյս պիտի տեսնէ
 «Լրատու»ի յաջորդ թիւով:

ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցէ office@armenianmp.com
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy